Ճապոնիայի կառավարությունը Հայաստանի մի քանի մարզերում սոցիալ-տնտեսական ծրագրեր է իրականացնում

20:36, 14 Մարտ, 2018

ԵՐԵՎԱՆ, 14 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ճապոնիայի Կառավարությունը Հայաստանի Հանրապետության մարզերում սոցիալ-տնտեսական ծրագրեր է իրականացնում՝ նպատակ ունենալով զարգացնել հատկապես առողջապահության և կրթության ոլորտները:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Ճապոնիայի կողմից Հայաստանին տրամադրվող աջակցությունն ուղղված է նաև աղետների կանխարգելման միջոցների ձեռնարկմանը, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում:

Ճապոնիայի կառավարությունը ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան միջոցով 2018 թվականին իրականացնում է դրամաշնորհային 6 ծրագիր:

ծրագիր է հաստատել: Մեր երկրի կառավարության առաջնահերթություններից են առողջապահության և կրթության ոլորտները: Այս տարի մենք այդ 6 ծրագրի համար հատկացրել ենք 400 հազար ԱՄՆ դոլար: Երկու տարի առաջվա համեմատ այս թիվը բավականին բարձր է»,- նշեց Տագուչին:

Նախագծերից մեկն իրականացվել է Արարատի մարզի Ղուկասավան գյուղում, որտեղ IT կենտրոն է ստեղծվելու, որի շենքի կառուցման համար է գումար հատկացվում և տրամադրվելու են նաև համակարգիչներ և պրոեկտորներ:

«Մեր այլ նախագծերից են՝ Շիրակի մարզի Ամասիայի շրջանում տարեցների համար կենցաղային ծառայությունների ապահովումը՝ տրամադրելով հատուկ մեքենաներ և սարքավորումներ: Սպիտակ քաղաքում դպրոցի ջեռուցումն ենք ապահովել՝ հիմնված արևային էներգիայի համակարգի վրա, և դրանով իսկ սպառումն է պակասելու: Լոռու մարզի տարբեր քաղաքների 4 մանկապարտեզի բակերում խաղահրապարակներ են կառուցվելու: Սիրիահայերին աջակցելու ենք, որպեսզի նրանք կարողանան աշխատեցնել իրենց «Ալեպպո Քուիզին» կենտրոնը, Հայաստանում լսողության նորածնային սկրինինգի ծրագիրն է ընդլայնվելու՝ ձեռք են բերվելու ախտորոշիչ սարքավորումներ»,- եզրափակեց Էյջի Տագուչին:

Կարծիքներ

10:05, 22.03.2018
Շնորհավորելով Պուտինին՝ Թրամփը ցույց տվեց, որ ընդունում է Ղրիմում նրա լեգիտիմ նախագահ լինելը. Ալեն Ղեւոնդյան

15:08, 17.03.2018
Ադրբեջանի քայլերը նախընտրական շոուներ են. Թեւան Պողոսյան

Բաժնի բոլոր նյութերը

Հարցազրույցներ

10:25, 15.03.2018
Վերականգնվող էներգետիկան արտադրության մեջ հնարավոր է հասցնել 60 տոկոսի. Հայաստանը բռնել է ինքնաբավության ուղին

10:09, 14.03.2018
Արմավիրի դատախազության առաջնային խնդիրներից է լինելու կոռուպցիայի դեմ պայքարը. Վահե Հովհաննիսյանի հարցազրույցը

Բաժնի բոլոր նյութերը

Փաստ մեկնաբանությամբ